ՆՈՐ ՅՈՅՑ ԳՈՐՈՎՈՅ Ս. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ

ԼԵՒՈՆ ԺԳ

Ի ՎԵՐԱՅ ՀԱՅՈՑ

Սրբազան Քահանայապետն Լեւոն ԺԳ, որ իւր բովանդակ քահանայապետական շրջանին մէջ՝ իւր հայրական սիրոյն առ ազգս մեր բազմադիմի և մեծամեծ հաւաստի ցոյցեր խնայած չէ յամենայն դէպս, ինչպէս վերջին տարիներուն մէջ, կը կարդանք որ Նա ինքն անցեալ ամիս Առաքելական Նոտարաւագ (*Protonotarius apostolicus*) պատուանունը շնորհած է ամենուս ծանօթ և սիրելի Հ. Շարմըտանի, մեր տառապեալ ազգային բարեխնամողի, հետեւեալ Նամակնով գովելով և օրհնելով մարդասէր կրօնաւորն, իր նորանոր մարդասիրական գործոց և գթոյն համար առ ազգս Հայոց։ Ուստի եթէ չներուի պահանջել որ՝ որ և է ազգային լրագիրք գովեստից հիւսիւք պճնեն Քահանայապետական գլուխն, որուն յիրաւի արժանի է, գէթ իրաւունք ունինք պահանջելու որ յարգանօք խօսուի այն Սրբազան Անձին մասին, զոր ամենայն քրիստոնեայ աշխարհ և ոչ քրիստոնեայք անգամ կը մեծարեն, և մեծամեծ ազգաց պէտք իրաւարար կը դնեն քաղաքական խնդրոց մէջ՝ իւր բարձր և արդարախոհ մտաց և դարուս մեծահանճար անձանց մին համարելով. և որ այնչափ մեծ և լուսաւորեալ ազգաց կրօնական պետն է, և գերագոյն հովուապետն հօտին Քրիստոսի։

ՍԻՐԵԼԻ ՈՐԴԻՈՅ ԼՈՒԴՈՎԻԿԻ ՇԱՐՄԸՏԱՆ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆՈՏԱՐԱՒԱԳԻ

Ի ՊԱՐԻԶ

Սիրելի որդի, ողջոյն և օրհնութիւն Առաքելական

Արդէն քու գրած թուղթերդ Մեզի առիթ տուած էին՝ ըստ արժանւոյն գովելու քու երկար ջանքդ և աշխատանքդ՝ յօգուտ Հայոց։ Մեր այս գովութիւնը՝ քեզ արժանապէս տրուած ըլլալը լիապէս կը հաստատեն, քու անկէ ետեւ անդադար աշխատիլդ՝ այդ տառապեալ ազգին բարւոյն համար։ Յիրաւի, չկայ քրիստոնէական գթութեան հետ այնպէս սերտ կապուած բան մի, ինչպէս այդ գործդ, որու՝ արիութեամբ ձեռք զարկիր և եռանդեամբ յառաջ կը տանիս։ Շարունակէ ուրեմն սկսածդ, և ապահով եղիր՝ որ քու ճարտարութիւնդ հաճոյ և գովելի է Մեզ, որ գթալիր սիրով կ'ողջագուրեմք Հայոց ազգը։ Իսկ հիմա, ի հաւաստիս աստուածային պարգեւաց և ի վկայութիւն Մեր սիրոյն, ընդունէ Առաքելական օրհնութիւնը, զոր առատապէս և սրտալիր սիրով քեզի շնորհեմք։

Տուեալ ի Հռովմ, առ Ս. Պետրոսի, յ'18 յուլիսի, 1898. յամի ԻԱ՛ Քահանայապետութեան Մերոյ։

(Ստորագրեալ)

ԼԵՒՈՆ ԺԳ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ

digitised by A.R.A.R.@